ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 929

*28 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հովհաննես Գարիկի Չոլախյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 17092024-07-0046) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Ծաղկաձոր ք., Ամառանոցային փողոց, 2 հասցեում գտնվող 0.180595 հա մակերեսով հողամասի բաժանման հետևանքով առաջացած (ըստ բաժանման հատակագծի) 0.0362 հա մակերեսով (բաժանվող հատված 1 ) հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Ամառանոցային փողոց, 2/4 հողամաս ,իսկ մնացած 0.1444 հա մակերեսով (բաժանվող հատված 2 ) հողամասի հասցեն՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Ամառանոցային փողոց, 2 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 928

*28 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով `

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.01388 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Փյունիկ, 1-ին փողոց, 22 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 925

*27 նոյեմբեր 2025թ.*

## ՀՈՂԱՄԱՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35- րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 14-ի N 117, 2025 թվականի նոյեմբերի 18-ի N 126 որոշումները և «ՖՈԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 2025 թվականի սեպտեմբերի 29-ի շուկայական արժեքի գնահատման եզրակացությունը՝՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Համայնքի կարիքների համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Խ. Կեչառեցու փողոց 3 մանաշենք հասցեում գտնվող, Լիլիթ Հրաչիկի Աբրահամյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի, հասարակական կառուցապատման՝ նպատականին և գործառնական նշանակության 0,159 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր 07-005-0025-0017) ձեռք բերել 122 535 000 (մեկ հարյուր քսաներկու միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով:
2. Համայնքապետարանի և քաղաքացի Լիլիթ Հրաչիկի Աբրահամյանի միջև կնքել առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 924

*27 նոյեմբեր 2025թ.*

ԱՐԱՄ ԱԶԻԶՅԱՆԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 826 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշման,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Արամ Տիգրանի Ազիզյանի դիմումը և N06112025-07-0092 սեփականության իրավունքի վկայականում պատկերված ինքնակամ շինությունները՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնք, Ծաղկաձոր քաղաք, Նոր թաղամասի 2-րդ փողոց 31 հասցեում գտնվող, Արամ Տիգրանի Ազիզյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական՝ N06112025-07-0092) 0,0741 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 212,95 (165,85 ներքին) քառ.մ. ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի շինությունները:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 580289 (հինգ հարյուր ութսուն հազար երկու հարյուր ութսունինը Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:
4. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի «Գեղամ Սահակյանի հողամասում կառուցված ինքնակամ կառույցները օրինականացնելու մասին» N826 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 923

*27 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համլետ Վալոդյայի Բաբաջանյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2025 թվականի սեպտեմբերի 29-ին,ՀՀ, Կոտայքի նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Հովհաննեսի Գինոսյանի կողմից, գրանցված սեղանամատյանում N 4677, ժառանգական գործ N 234 և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի N 828 որոշումը), 0.22696 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Մեղրաձոր, 3-րդ փողոց, 7-րդ փակուղի, 5 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 922

*27 նոյեմբեր 2025թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 828 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով `

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի «Համլետ Վալոդյայի Բաբաջանյանի սեփականության իրավունքը ճանաչելու և գրանցված հողամասի մակերեսից ավել օգտագործվող հողամաս օտարելու մասին» N 828 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման հիման հիմքում՝ 3-րդ փողոց 7 փակուղի թվերից և բառերից հետո գրված «13» թիվը փոխարինել «5» թվով,

2) որոշման 1-ին կետի՝ 3-րդ փողոց 7 փակուղի թվերից և բառերից հետո գրված «13» թիվը փոխարինել «5» թվով :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 921

*27 նոյեմբեր 2025թ.*

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Պրայմֆուդ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր համայնք, Կեչառեցու փողոց, թիվ 8/2 / տրամադրել՝ 2025 թվականի դեկտեմբերի 01-ից դեկտեմբերի 31-ը հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 36 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 920

*27 նոյեմբեր 2025թ.*

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Պարկ Լոպ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել 2025 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը Ծաղկաձոր համայնք, Տանձաղբյուրի փողոց, թիվ 6/11 հասցեում՝ 140 քմ ընդհանուր մակերեսով իր կազմակերպության արտաքին գովազդը տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 919

*25 նոյեմբեր 2025թ.*

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 84-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշմամբ հաստատված կարգը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2.Հաստատել՝ Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման անցկացման վերաբերյալ հայտարարությունը՝ համաձայն հավելվածի:
3.Ապահովել համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների իրավերի տեղադրումը, ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:
4.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Նարինե Խաչատրյանի վրա:
5.Սույն որոշման հսկողությունը վերապահել Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բադալյանին:
6.Հանրային բաց լսումները տեղի կունենան 2025 թվականի դեկտեմբերի 11-ին ժամը 12:00-ին Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրներ 9:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հավելված*

*Ծաղկաձոր համայնքի ղեկավարի*
*2025 թվականի նոյեմբեր 25-ի*
*N919 որոշման*

*ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Ծաղկաձորի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2025 թվականի նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 10-ը ներառյալ կազմակերպվող Ծաղկաձոր համայնքի ավագանու՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկմանը:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ https://tsakhkadzor-kotayk.am և ֆեյսբուքյան էջում https://www.facebook.com/tsaghkadzormunicipality?locale=hy_AM հրապարակված Ծաղկաձոր համայնքի ավագանու՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2025 թվականի դեկտեմբերի 10-ը ներառյալ ուղարկել info@visittsaghkadzor.com էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Ծաղկաձորի համայնքապետարան:

Հանրային քննարկումը տեղի կունենա 2025 թվականի դեկտեմբերի 11-ին ժամը 12:00-ին Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրներ 9:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060680259 հեռախոսահամարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 918

*24 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Մարգարիտա Էֆրեմիդունին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2025 թվականի հոկտեմբերի 22-ին,ՀՀ, Կոտայքի նոտարական տարածքի նոտար՝ Տաթև Ղուկասյանի կողմից, գրանցված սեղանամատյանում N 7345, ժառանգական գործ N 307), 0.066 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Հանքավան, 3-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 6 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 917

*24 նոյեմբեր 2025թ.*

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔ ԾԱՂԿԱՁՈՐ ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՍԻԿ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԱՎԱԳՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածի պահանջնեով, հիմք ընդունելով Համասիկ Պատվականի Ավագյանի դիմումը, անհատ ձեռնարկատեր «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» կողմից տրված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունների առկայությունը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները կամ չի առաջացնում սերվիտուտ՝**

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել Համասիկ Պատվականի Ավագյանի սեփականության իրավունքը մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, քաղաք ծաղկաձոր,Նոր թաղամաս,3-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող, 07-005-0016-0028 կադաստրային ծածկագրով 0.06 հա մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասի և դրա վրա կառուցված ընդհանուր 112,53 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկատմամբ, որը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և շահագործվում է մինչ օրս :
2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անհատ ձեռնարկատեր «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» կողմից չափագրված և Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 916

*24 նոյեմբեր 2025թ.*

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԾԱՂԿԱՁՈՐ ԳՅՈՒՂ ԱՂԱՎՆԱՁՈՐ3-ՐԴ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՄԱՅԻՍ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՍԱՀՐԱԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Արամայիս Վարազդատի Սահրադյանի դիմումը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից տրված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունների առկայությունը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները կամ չի առաջացնում սերվիտուտ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել Արամայիս Վարազդատի Սահրադյանի սեփականության իրավունքը մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գյուղ Աղավնաձոր,3-րդ փողոց,3-րդ փակուղի թիվ 2 հասցեում գտնվող, 07-010-0013-0036 կադաստրային ծածկագրով ըստ օրենքի ժառանգության վկայագրով անցած 0.28 հա մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասի և դրա վրա կառուցված ընդհանուր 483,6 քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ, որոնք կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և տիրապետվում է մինչև այսօր: 2.Ճանաչել Արամայիս Վարազդատի Սահրադյանի սեփականության իրավունքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով տրամադրված 0.28 հա մակերեսով հողամասից ավել փաստացի օգտագործվող 20 տոկոսի չափով հողամասի նկատմամբ, որը կազմում է 0,336 հա: 3. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից չափագրված և Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 915

*24 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կամո Էդիկի Ավագյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2025 թվականի նոյեմբերի 19-ին,ՀՀ, Կոտայքի նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Հովհաննեսի Գինոսյանի կողմից, գրանցված սեղանամատյանում N 5474, ժառանգական գործ N 301), 0.0108 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Ե. Չարենցի փողոց, 31/1 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 914

*24 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կամո Էդիկի Ավագյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2025 թվականի նոյեմբերի 19-ին,ՀՀ, Կոտայքի նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Հովհաննեսի Գինոսյանի կողմից, գրանցված սեղանամատյանում N 5474, ժառանգական գործ N 301), 0.0748 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Ե. Չարենցի փողոց, 31/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 913

*24 նոյեմբեր 2025թ.*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> օրենքի 17-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի <<Գնումների պլանի ձևը,դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին>> թիվ 390-Ն որոշման հավելված N 3-ի 4-րդ և 9-րդ կետերով, հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար 2026 թվականին կենտրոնացված եղանակով իրականացվող գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Ապահովել կենտրոնացված ընթացակարգով կատարվող գնումների պլանի փոփոխությունների և լրացումների հրապարակայնությունը օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 912

*24 նոյեմբեր 2025թ.*

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Ջի Էմ Քոմփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2025 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում Ծաղկաձոր համայնք, Տանձաղբյուրի փողոցում ՝ 66,7 քմ ընդհանուր մակերեսով թունդ ալկոհոլային սպիրտի գովազդ տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 911

*20 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լևոն Վալերիի Մարդյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2025 թվականի սեպտեմբերի 19-ին,ՀՀ, Երևանի նոտարական տարածքի նոտար՝ Լիլիթ Ասատուրի Մուրադյանի կողմից, գրանցված սեղանամատյանում N 2614, ժառանգական գործ N 11), 0.175 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Արտավազ, 3-րդ փողոց, 7 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 910

*20 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաջիկ Վաչագանի Պետրոսյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2025 թվականի նոյեմբերի 17-ին,ՀՀ, Կոտայքի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Հովհաննեսի Գինոսյանի կողմից, գրանցված գրանցամատյանում N 5609, ժառանգական գործ N 29), 0.2156 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Մեղրաձոր, 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 2 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 909

*20 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ազատ Աշոտի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 29032024-07-0127) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Սարալանջի փողոց, 72 հասցեում գտնվող 0.03731 հա մակերեսով հողամասի և (սեփականության վկայական N 13112025-07-0091) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Սարալանջի փողոց, 72/1 հասցեում գտնվող 0.06269 հա մակերեսով հողամասի միավորման հետևանքով առաջացած 0.1 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց, 72 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 908

*19 նոյեմբեր 2025թ.*

## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՏԵՂԱԴԻՐՔԻ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին թիվ 698-Ն որոշմամբ, և հիմք ընդունելով սեփականատեր Էլեն Արթուրի Պողոսյանի դիմումը և Արմեն Մելիքյան ԱՁ-ի կողմից տրված հողամասերի հատակագիծը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կատարել Ծաղկաձոր համայնք,քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց,թիվ 32 հասցեում գտնվող Էլեն Արթուրի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, միավորման արդյունքում առաջացած 0.06111 հա մակերեսով, (07-005-0008-0214, 0082 կադաստրային ծածկագրերով) հողամասի սահմանների և տեղադիրքի ուղղումը:
2. Քանի որ հողամասերի գծային չափերը նախկինում սխալ են պատկերվել, հիմք ընդունել և հաստատել փաստացի օգտագործվող տարածքի չափագրման հիման վրա Արմեն Մելիքյան ԱՁ-ի կողմից կազմված հատակագծերը:
3.Սույն որոշումը ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում, իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 907

*19 նոյեմբեր 2025թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Էլեն Արթուրի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 29102025-07-0093) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Օրբելու փողոց, 19 հասցեում գտնվող 0.051 հա մակերեսով հողամասի և (սեփականության վկայական N 29102025-07-0043) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Օրբելի եղբայրների փողոց, 32/5 հասցեում գտնվող 0.0102 հա մակերեսով հողամասի միավորման հետևանքով առաջացած 0.0612 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց, 32 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 906

*18 նոյեմբեր 2025թ.*

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի, վճարների տեսակները, տեղական վճարների աղբահանության գծով արտոնություններ, համայնքի կողմից մատուցվող արտադպրոցական դաստիարակության, մշակութային և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին որոշման նախագծերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:

2.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի, վճարների տեսակները, տեղական վճարների աղբահանության գծով արտոնությունները, համայնքի կողմից մատուցվող արտադպրոցական դաստիարակության, մշակութային և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափերը և արտոնություններ սահմանելու մասին որոշման նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների անցկացման վերաբերյալ հայտարարությունը՝ համաձայն հավելվածի:

3.Ապահովել համայնքապետարանի ինտերնետային կայքում՝ ֆեյսբուքյան էջում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Ծաղկաձոր համայնքի ավագանու՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի, վճարների տեսակները, տեղական վճարների աղբահանության գծով արտոնությունները, համայնքի կողմից մատուցվող արտադպրոցական դաստիարակության, մշակութային և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին որոշման նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների անցկացման վերաբերյալ հայտարարության տեղադրումը, ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:

4.Սույն որոշման կատարումն ու պատասխանատվությունը դնել Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետ, զարգացման ծրագրերի պատասխանատու Իշխան Եղիազարյանի վրա:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունը վերապահել Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գարիկ Բադալյանին:

6.Հանրային բաց լսումները տեղի կունենան 2025 թվականի դեկտեմբերի 03-ին ժամը 12:00-ին Ծաղկաձորի համայնքապետարանի շենքում, հասցեն՝ քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց թիվ 9:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի
2025 թվականի նոյեմբեր 18-ի
N 906 որոշման

*ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Ծաղկաձորի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2025 թվականի նոյեմբերի 19 -ից մինչև դեկտեմբերի 03-ը ներառյալ կազմակերպվող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի, վճարների տեսակները, տեղական վճարների աղբահանության գծով արտոնություններ, համայնքի կողմից մատուցվող արտադպրոցական դաստիարակության, մշակութային և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին որոշման նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկմանը:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Ծաղկաձոր համայնքի ավագանու՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի, վճարների տեսակները, համայնքի կողմից մատուցվող արտադպրոցական դաստիարակության, մշակութային և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին որոշման նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2025 թվականի դեկտեմբերի 02-ը ներառյալ ուղարկել info@visittsaghkadzor.com էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Ծաղկաձորի համայնքապետարան:

2025 թվականի դեկտեմբերի 03-ին ժամը 12:00-ին Ծաղկաձորի համայնքապետարանի շենքում տեղի կունենա հանրային բաց լսումներ, հասցեն՝ քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրներ, թիվ 9 շենքում:

Տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060680124 հեռախոսահամարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 905

*18 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող 0.52577 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Անտառային 2-րդ թաղամաս, 9 անտառտնտեսության տարածք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 904

*18 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 08-ին հաստատված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք -5 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի կազմում ներառված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատելու մասին» թիվ 127-Ն որոշումը, Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի պահանջները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը չի առնչվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին և հիմք ընդունելով Զոհրաբ Համբարձումի Բաբախանյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաշվի առնելով Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի պահանջները՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Ծաղկաձոր քաղաք Տանձաղբյուրի փողոց 14/1 հասցեում գտնվող , Զոհրաբ Համբարձումի Բաբախանյանին սեփականության իրավունքով պատկանող, 07-005-0023-0335 կադաստրային ծածկագրով , 0.0585 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը՝ հատուկ պահպանվող , հանգստի համար նախատեսված հողերից փոփոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված հողերի:

2.Սույն փոփոխությունը կատարել նաև Ծաղկաձոր համայնքի կադաստրային քարտեզում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 903

*17 նոյեմբեր 2025թ.*

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ և հիմք ընդունելով «ԱԼՎԻՆԱ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» փակ բաժնետիրակա ընկերության գործադիր մարմնի ղեկավար Սուրեն Կիրակոսյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

«ԱԼՎԻՆԱ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (վկայական 30112021-07-0173), մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, ք. Խ.Մուրադյան փողոց 3 շենք 1 տարածք հասցեում գտնվող 2674.54 քառ.մ մակերեսով կոմերցիոն տարածքի գործառնական նշանակությունը, փոխել և պատկերել որպես բնակելի ավտոկայանատեղի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 902

*14 նոյեմբեր 2025թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ , ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 406 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի՝
1) աղետների ռիսկերի կառավարման պլանը՝ համաձայն հավելված 1- ,
2) աղետների ռիսկերի կառավարման խորհրդի կազմը՝ համաձայն հավելված ,
3) աղետների ռիսկերի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված :
2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 28-ի «Ծաղկաձոր համայնքում աղետների ռիսկերի կառավարման համակարգի մեջ փոփոխություն կատարելու և կառավարման պլանը հաստատելու մասին» թիվ 406 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 901

*14 նոյեմբեր 2025թ.*

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«ՌԵՁՈՐԹ ՄԵԴԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Ծաղկաձոր համայնք, Սարալանջի, Տանձաղբյուրի, Խաչատուր Կեչառեցու, Եղիշե Չարենցի, Միեր Մկրտչյանի, Օրբելի Եղբայրների,Վլադիմիր Հարությունյանի, Գրիգոր Մագիստրոսի փողոցներում 2025 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում 150,5 քմ ընդհանուր մակերեսով այլ արտաքին գովազդ, ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանքի արտաքին գովազդ 12 քմ, սեփական գովազդ 20 քմ, դատարկ վահանակներ 191 քմ, սոցիալակն գովազդ 18 քմ տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 900

*14 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Մենուա Վարդանի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող ( սեփականության վկայական N 27102025-07-0012), 0.705175 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Արտավազ, 6-րդ թաղամաս, 5 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 899

*14 նոյեմբեր 2025թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Վարդան Սմբաթի Գրիգորյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2025 թվականի նոյեմբերի 11-ին,ՀՀ, Կոտայքի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Հովհաննեսի Գինոսյանի կողմից, գրանցված գրանցամատյանում N 5487, ժառանգական գործ N 289,գրանցված գրանցամատյանում N 5488, ժառանգական գործ N 289 ), 0.17 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Մարմարիկ, 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, 1 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 898

*14 նոյեմբեր 2025թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 03-Ի N 858 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով `

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 03-ի «Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելումասին» N 858 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) որոշման 1- ին կետի՝ գյուղատնտեսական բառից հետո գրված « արոտավայրից» բառը փոխարինել «այլ հողատեսքից» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 897

*14 նոյեմբեր 2025թ.*

## ՀԱՄԼԵՏ ՎԱԼՈՂՅԱՅԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՐԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի համար 867 որոշման կարգի 3-րդ և 5-րդ կետերով, հիմք ընդունելով 2025 թվականի սեպտեմբերի 29-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, Համլետ Վալոդյայի Բաբաջանյանի դիմումը և անհատ ձեռնարկատեր «Ռուստամ Մաթևոսյանի» կողմից տրված հողամասի հատակագիծը, որի համաձայն մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գ. Մեղրաձոր հասցեում գտնվող, 07-045-0382-0007 կադաստրային ծածկագրով հողամասը ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով փոխանցվել է 0.3 հա, որը օգտագործվում է Համլետ Բաբաջանյանի կողմից և փաստացի կազմում է 0.39016 հա և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համլետ Բաբաջանյանին տրամադրվող հողամասը և հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործվելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ճանաչել Համլետ Վալոդյայի Բաբաջանյանի (ծնված 1961 թվականի փետրվարի 8-ին) սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գ. Մեղրաձոր հասցեում գտնվող, 07-045-0382-0007 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0.39016 հա մակերեսով (տրամադրված 0.3 հա) գյուղատնտեսական, որպես ջրովի վարելահող

նախատեսված հողամասի նկատմամբ, որը փաստացի կառուցվել և օգտագործվել է նրա կողմից:

2.Ճանաչել Համլետ Վալոդյայի Բաբաջանյանի սեփականության իրավունքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով տրամադրված 0.3 հա մակերեսով հողամասից ավել փաստացի օգտագործվող 20 տոկոսի չափով հողամասի նկատմամբ իսկ մնացած ավել օգտագործվող 0.03016 հա մակերեսով հողամասը օտարել կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով, որը կազմում է 15088 (տասնհինգ հազար ութսունութ) դրամ:

3. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անհատ ձեռնարկատեր «Ռուստամ Մաթևոսյանի» կողմից չափագրված և Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 898

*14 նոյեմբեր 2025թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 03-Ի N 858 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 03-ի «Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 858 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 1- ին կետի՝ գյուղատնտեսական բառից հետո գրված « արոտավայրից» բառը փոխարինել «այլ հողատեսքից» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 896

*13 նոյեմբեր 2025թ.*

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկաձորի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ Կոտայքի մարզային վարչության գրության հիման վրա:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կարեն Սամվելի Մուշեղյանի Ծաղկաձոր համայնքի Օլիպիական փողոցին հարող տարածքում գտնվող Ծաղկաձորի համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում, ապօրինի կառուցել է ինքնակամ շինություն՝ երկաթյա կոնստրուկցիաներով, այսինքն կատարել է իրավախախտում, որը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /հետայսու՝ Օրենսգիրք/ 154-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից մեկը պետությանը համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկից մինչև երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի լսումների վերաբերյալ ծանուցվել է փոստային առաքման եղանակով, Կարեն Մուշեղյանը, սակայն վերջինս չի ներկայացել լսումներին: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, հաստատված է համարում, որ կատարվել է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է քաղաքացի Կարեն Մուշեղյանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 33-րդ հոդվածով , 154-րդ հոդվածի 3-րդ մասով , 219.1-րդ, 252-րդ, 281-րդ, 282-րդ և 305-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ , 58-60-րդ հոդվածներով,

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կից վարչական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 04 արձանագրությունը .

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կարեն Մուշեղյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ՝ տուգանք, 2 000 000/ երկու միլիոն / ՀՀ դրամ գումարի չափով:

2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում հետևյալ հաշվեհամարին . 900125002114

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Կարեն Մուշեղյանին պատշաճ իրազեկելու հաջորդ օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 30 /երեսուն/ օրվա ընթացքում, իսկ դատական կարգով՝ երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 895

*13 նոյեմբեր 2025թ.*

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկաձորի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Ծաղկաձոր համայնքի, Արտավազ գյուղի, թիվ 4 շենքի բնակիչների կողմից համայնքի ղեկավարին հասցեագրված դիմում բողոքի հիման վրա:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ բնակավայրի բնակիչ Գագիկ Լյուդվիգի Սեփոյանը իրեն պատկանող խոշոր եղջերավոր անասունները պահել է դրա համար չնախատեսված վայրում, այսինքն կատարել է իրավախախտում, որը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /հետայսու՝ Օրենսգիրք/ 114-րդ հոդվածով, համաձյան որի արգելված տեղերում անասուններ պահելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի լսումների վերաբերյալ ծանուցվել է Գ.Սեփոյանը, որը ընդունել է իրավախախտում կատարելու փաստը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, հաստատված է համարում, որ կատարվել է Օրենսգրքի 114-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է Գագիկ Սեփոյանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 33-րդ հոդվածով , 114-րդ հոդվածով , 219.1-րդ, 252-րդ, 281-րդ, 282-րդ և 305-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ , 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կից վարչական հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 5 արձանագրությունը.

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ բնակավայրի բնակիչ Գագիկ Սեփոյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ՝ տուգանք, 10 000/տասը հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում հետևյալ հաշվեհամարին . 900125002114 :

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Գագիկ Սեփոյանին կամ ներկայացուցչին պատշաճ իրազեկելու հաջորդ օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 30 /երեսուն/ օրվա ընթացքում, իսկ դատական կարգով ՝ երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ